

վեհիցս մերայոց, եւ ՚ի հետաքննութիւն գործոց նոցին ընդ օտարացն  
գուգակշռելով: Այլ մինչ չեւ միեալ իմ յայս՝ ազդ առնեմ հայրենասիրաց,  
զի պատմագրել կամիմ եւ ոչ վիպասանել. չեն իմ կամք ստեղծանել զոմն  
Լեւոն ըստ քսենոփոնեանն փիլիսոփայութեան ՚ի Կիւրոս, այլ ըստ  
մնացորդաց յիշատակաց եւ դիւանաց՝ ցուցանել զազգակեցոյցս մեր  
Ռուբինեան Լեւոն, համօրէն մեծութեամբն եւ թերութեամբն ինչ, որպէս  
լուսաւոր ոչ իսպառ անստուեր. բայց կամիմ եւ ՚ի համանմանեացն  
բարձակցաց միջի հանդիսացուցանել զնա, զի քաջայայտ լիցի  
իրաքանչիւր չափ, եւ մի՛ վայրապար կարծիցիմ մերումս ընծայել  
առաւելութիւն, յորժամ երեւիցի վեհ ՚ի միջի վեհից: